


**ИСТОРИЯ**

**Արցախի կրթական ոլորտի խնդիրների արտացոլումը «Մշակ» թերթի էջերում (19-րդ դարի երկրորդ կես)**

Հարությունյան Մարինե Գ.

ս.գ.թ., ավագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0000-1746-8708>

[marina-arutunyan@mail.ru](mailto:marina-arutunyan@mail.ru)

ՀՏԳ՝ 070(091):373(091); EDN: HTWYBN;

DOI: 10.58587/18292437-2024.5-53

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Շուշի, Թեմական հոգևոր դպրոց, Գանձասարի վանական դպրոց, Մարիամյան օրհորդաց ուսումնարան, Գիշի գյուղի ծխական դպրոց, «Մշակ», Վարանդա, կրթություն, «բարեգործական ընկերություն», Հռիփսիմյան օրհորդաց միջնակարգ դպրոց

**Отражение проблем образовательной сферы Арцаха на страницах газеты «Мшак» (вторая половина XIX века)**

Арутунян Марине Г.

к. и. н., старший научный сотрудник, Институт истории НАН РА (Ереван, РА)

**Аннотация:** Одним из главных центров армянской культуры является школа, имеющая тысячелетнюю историю. Школа на протяжении веков считалась важнейшим фактором проявления и выживания национальной независимости. Многовековой путь армянской образовательной и культурной жизни особенно проявился во второй половине XIX века.

В научной статье представлены ценные сведения о деятельности армянских школ, действовавших в Арцахе во второй половине XIX века. Представленная нами проблема была рассмотрена на основе ценных материалов, размещенных на страницах газеты «Мшак». На основе некоторых научных исследований в статье подчеркивается значение общественно-политического и педагогического движения, происходившего в России и Закавказье в 1950-1960-е годы, которое благотворно повлияло на развитие армянской школы и педагогической мысли. Рядом с существующими армянскими духовными школами открывались новые епархиальные, церковно-приходские школы. В Арцахе постепенно открывались мужские, женские, одноклассные, двухклассные школы. В своих различных выпусках газета «Мшак» освещает деятельность Шушинской епархиальной школы, женской школы Рипсимиан, Шушинской реальной школы, пастырской школы села Аветараноц и ряд вопросов, связанных с этими школами. В статье также рассматриваются некоторые другие вопросы, связанные с Гадрутской духовной школой. Также очень мало информации об образовательной жизни других регионов Арцаха.

**Ключевые слова и словосочетания:** Шуши, Епархиальная духовная школа, Гандзасарская монастырская школа, женская школа Мариамян, Приходская школа села Гиши, «Мшак», Варанда, Образование, Благотворительное общество, Средняя женская школа Рипсимиан

**The reflection of the problems of the educational sphere of Artsakh on the pages of the newspaper “Mshak” (the second half of the 19th century)**

Harutyunyan Marine G.

Candidate of Historical Sciences, Senior Researcher, Institute of History NAS RA (Yerevan, RA)

**Annotation.** One of the main centers of Armenian culture is the school which has a history of thousands of years. It has been considered as the most important factor in the manifestation and survival of national independence for centuries. The centuries-old path of Armenian educational and cultural life was especially manifested in the second half of the 19th century.

The scientific article presented valuable information about the activities of Armenian schools operating in Artsakh in the second half of the 19th century. The problem we presented was considered on the basis of valuable materials posted on the pages of the newspaper “Mshak”. Based on some scientific research, the article emphasizes the importance of the socio-political and pedagogical movement that took place in Russia and Transcaucasia in the 1950-1960s, which had a beneficial effect on the development of the Armenian school and pedagogical thought. New diocesan, church-parochial schools were opened next to the existing Armenian religious schools. Male, female, one-class (միասյուս), two-class (երկասյուս), Mixed Gender schools (երկսեռ) gradually began to open in Artsakh.

In its various issues, the newspaper “Mshak” covers the activities of the Diocesan School of Shushi, the Hripsimian Girls’ School, the Realakan School of Shushi, the Pastoral School of the village of Avetaranos and a number of issues related to these schools. The newspaper also addresses some other issues related to the Spiritual School of Hadrut. There is also very little information about educational life in other regions of Artsakh.

**Թեմայի արդիականությունը.**

Հայկական բազմադարյա մշակույթի պատմության կարևորագույն էջերից է գիտակրթական տարբեր օջախների գործունեության ուսումնասիրությունը: Հայկական կրթական օջախների գործունեությունն ավելի ակտիվորեն դրսևորվեց հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած: Գործող հայկական հոգևոր դպրոցների կողքին բացվեցին նոր թեմական [15, էջեր 1-3], եկեղեցական ծխական դպրոցներ: Արցախում հետզհետե սկսեցին բացվել արական, իգական, միդասյա, երկդասյա, երկսեռ դպրոցներ [16, էջ 88]: Եկեղեցական ծխական դպրոցները գտնվում էին ծխական համայնքների տնօրինության տակ, որոնք պահվում էին եկեղեցու եկամուտներով և նվիրատվություններով:

Արցախի տարբեր շրջաններում 19-րդ դարի երկրորդ կեսին գործում էին հոգևոր դպրոցներ: Հայտնի էին՝ Շուշու Թեմական Հոգևոր դպրոցը (բացվել էր 1838 թ.) [8; 13; 10], Վարանդա գավառի Ամարաս վանքի դպրոցը (հիմնվել էր 1857 թ.), Ավետարանոց գյուղի ծխական դպրոցը (գործել էր 1873 թ-ից), Աշան գյուղի ծխական դպրոցը (գործել էր 1873 թ-ից), Գանձասարի վանական դպրոցը (դպրոցը գործել էր 19-րդ դարի 20-30-ական թթ., այն կրկին բացվել էր 1857 թ.), Գիշի գյուղի ծխական դպրոցը (1888 թ.), Երից Մանկանց վանքի (1860-ական թթ.), Թաղավարդ գյուղի արական ծխական (1884 թ.) դպրոցները, Շուշիի Հռիփսիմյան օրհորդաց միջնակարգ դպրոցը (բացվել էր 1876 թ-ին՝ վարդապետ Արիստակես Մեղրակյանի ջանքերով), Շուշիի կույսերի մենաստանին (Կուսանաց Անապատին) կից ծխական դպրոցը (գործել էր 1873 թ.), Շուշիի Ագուլեցոց եկեղեցուն կից գործող ծխական դպրոցը, Շուշիի Մեղրեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցու արական դպրոցը (գործել էր 1873 թ-ից), Շուշիի Գայանե Դանիելյանի երկսեռ դպրոցը (գործել էր 1873 թ-ից), Ռեալական ուսումնարանը (1881 թ), Շուշիի Մարիամ-Ղուկասյան օրհորդաց միջնակարգ դպրոցը, Շուշիի հայկական մասնավոր դպրոցները և այլն [9, էջեր 354-383]:

**Թեմայի արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ սույն դպրոցների պատմությունը՝ ներկա աշխարհաքաղաքական ժամանակահատվածում կեղծարար ուսումնասիրողների կողմից կեղծվում են, կամ լրիվությամբ ժխտվում: **Մեր հիմնական խնդիրն է՝** այդ անժխտելի փաստերի հիման վրա հակասել որոշ կեղծարարների ուսումնասիրություններին, կրկին փաստել այդ դպրոցների առկայության և հայկական լինելիության մասին:

**Հետազոտության նպատակն ու գիտական նորույթը.**

Արցախի 19-րդ դարի երկրորդ կեսի կրթական կյանքի տարբեր խնդիրներ լուսաբանվել են գիտության բնագավառի մի շարք ներկայացուցիչների կողմից [1-14]: Մակայն, ընդգծվող գիտական թեմայի հետազոտությունը՝ «Մշակ» թերթի էջերում գետեղված նյութերի ուսումնասիրության տեսանկյունից հանգամանորեն չի դիտարկվել: **Ուստի մեր նպատակն է՝** «Մշակ» թերթի նյութերի հիման վրա ներկայացնել՝ սույն ժամանակաշրջանի Արցախի տարբեր շրջաններում գործող դպրոցների գործունեությանն առնչվող, չիրապարակված որոշ տեղեկություններ:

Մեր գիտական ուսումնասիրության շրջանակների մեջ ներառել ենք հիմնականում «Մշակ» պարբերականում գետեղված նյութերի լուսաբանումը: **Հետազոտության գիտական նորույթը** պայմանավորված է՝ պարբերականի էջերում որոշ նյութերի նորովի ներկայացմամբ և վերլուծմամբ:

19-րդ դարի երկրորդ կեսին լույս ընծայված շատ պարբերականներ օբյեկտիվորեն անդրադարձել էին Արցախի կրթական կյանքի տարբեր ոլորտների խնդիրներին (կապված ուսուցման գործընթացի, ուսումնական ծրագրերի, անհրաժեշտ առարկաների, դպրոցների նյութական և այլ խնդիրների հետ), տվել համապատասխան գնահատականներ: Արցախի կրթական ոլորտների խնդիրներին է անդրադարձել նաև «Մշակ» հասարակական-քաղաքական, գրական թերթը:

Ուշագրավ է թերթում գետեղված Մարտիրոս Քալանթարեանցի հոդվածը, որի մեջ հեղինակը ներկայացնելով Արցախի ազգային հոգևոր դպրոցի կրթությանն առնչվող խնդիրները՝ ընդգծում է, որ 1872 թ. Հոգևոր դպրոցը իրենից ներկայացնում է մի հոյակապ շինություն, որը բաղկացած է երեք հարկից. դրանցից երկուսը հանգուցեալ միտրոպոլիտ Բաղդասար Հասան Չալալեանց եպիսկոպոսից էր մնացել, իսկ երրորդն այս տարի շինեց Հայր Սարգիս եպիսկոպոս Հասան Չալալյանցը՝ որպես նվեր ուսումնարանին [17, 1872, № 39 (5 հոկտեմբերի), էջ 3]: Այնուհետև, նա անդրադառնալով կրթության որոշ խնդիրներին՝ որպես թերություն ընդգծեց երեխաներին մեխանիկական սովորեցնելու մեթոդը (անգիր անելը): Հոդվածագիրն ողջունում է օտար լեզուների դասավանդումը հայկական դպրոցներում: Նա նշում է, որ Արցախի Հոգևոր դպրոցում ֆրանսերեն լեզվի դասավանդման հետ կապված, մենք պետք է շնորհակալ լինենք Հայր Գ. վարդապետ Փափազյանցին, ով մեծ ջանքեր գործադրեց այդ լեզվի

առաջադիմության համար [17, 1872, № 39 (5 հոկտեմբերի), էջ 3]: Քալանթարեանցը որոշ քննադատական մոտեցում է ցուցաբերել պատմության առարկայի դասավանդման հետ կապված. «Այդ առարկաների ուսուցիչները մոռանում են պատմության սովորացնելու գլխավոր պայմանները: Նորա սովորացնում են միայն լոկ պատմական անցքերը և աշակերտներին պատմածը բաղկանում է մի քանի զանազան մասերից, որոնց մէջ չկայ բոլորովին կապ ...» [17, 1872, № 39 (5 հոկտեմբերի), էջ 3]: Հոդվածագիրը բարձր գնահատելով Պետրոս Շանշյանի [12] տեսչության տարիները՝ նշում է, որ ի տարբերություն այդ տարիների, առայժմ սուսուցման մակարդակն ավելի ցածր է [12]:

Ս. Քալանթարեանցը մտահոգություն էր հայտնել հայ օրիորդների ուսուցման խնդրի հետ կապված. «Միևնոյն ժամանակ խղջայի է օրիորդաց դրոյթին, որովհետև չկայ այստեղ գոնե մի փոքրիկ ուսումնարան, ուր կարողանային սովորել անզամ կարդալ ու գրել: Մարիամեան օրիորդաց ուսումնարանն [14] արդէն ավերուել է: Բայց ասում են, որ Հայր Սարգիս եպիսկոպոսն ունի նպատակ այս տարի բացել փոքր օրիորդաց ուսումնարան միևնոյն շինութեան մէջ, որտեղ է տղերաց համար ...» [17, 1872, № 39 (5 հոկտեմբերի), էջ 3]:

Արցախի կրթական ոլորտի խնդիրներին է անդրադարձել Ալեքսանդր մելիք Փաշայանը: Վերջինս իր «Նամակ Շուշուց» հոդվածում նշում է. «...Մարիամեան օրիորդաց ուսումնարանը փակուած է վաղուց, այն հասարակաց ընթերցարանը, որ ես իմ աշակերտութեան ժամանակս 1865 թվին մտնում էի, հիանում էի գոնեով այնտեղ ամէն տեսակ գրքեր, այժմ անհետացել է» [18, 1872, № 42 (26 հոկտեմբերի), էջ 3]: Հոդվածագիրը հիշատակում է նաև Արցախի Հոգևոր դպրոցի ներքին խնդիրների մասին [18, 1872, № 42 (26 հոկտեմբերի), էջ 3]:

Ուշագրավ են Անտոն Մելիք Դադայեանցի մանրակրկիտ դիտարկումներն Արցախի Հոգևոր դպրոցի ներքին խնդիրների մասին: Ըստ նրան՝ Հոգևոր դպրոցի ներքին խնդիրներն ավելի վառ դրսևորվեցին հատկապես Պետրոս Շանշյանի տեսչության պաշտոնից հեռանալուց հետո [19, 1873, № 7 (22 փետրվարի), էջ 2]:

«Մշակ» թերթի 1873 թվականին հրատարակված հոդվածներից մեկում հոդվածագիրը նկարագրելով Շուշիի սոցիալական իրավիճակը՝ բարձր է գնահատում Սրբազան արքեպիսկոպոս Ս. Ջալալյանցի դերն երեխաների կրթության գործում. «Սարգիս Ջալալեանցը ոչ թէ միայն կենդանացրել է քաղաքիս արու մանկանց ուսումնարանը, բաց նաև իզական սեռի դաստիարակութեանը համար կանգնեցրել է մի շքեղ շէնք: Հարկաւ չի վրիպիլ մեր արքեպիսկոպոսին տեսութանիցը այն իրողութիւնն էլ, թէ մէկ դպրոց լոկ իր քարերովն ու պատերով, որչափ պանծալի էլ լինի, տակաւին

դպրոց չի ստուիլ, այլ թէ պէտք են նմասալէս և վարժապետք...» [20, 1873, № 34 (6 սեպտեմբերի), էջ 3]:

Թերթի նույն համարը նշում է նաև Արցախի Գետաշեն գյուղի դպրոցի բարդ իրավիճակի, առաջացած կրթական խնդիրների մասին [20, 1873, № 34 (6 սեպտեմբերի), էջ 3]:

Պարբերականի 1873 թվականի մեկ այլ համար նշում է Արցախի Հայոց Հոգևոր դպրոցի ներքին լարված իրավիճակի, կրթական կյանքում առաջացած որոշ խնդիրների [28, 1877, № 83 (10 նոյեմբերի), էջ 2; 46, 1882, N 208 (10 նոյեմբերի), էջեր 1-2; 48, 1883, № 46 (16 մարտի), էջ 1], ինչպես նաև արքեպիսկոպոս Ս. Ջալալյանցի, Խորեն վարդապետ Ստեփաննի անձնամբեր գործունեության մասին: Հոդվածագիրը նշում է, որ Սրբազան Սարգիս արքեպիսկոպոսը տեսնելով հոգևոր դպրոցի վատ կարգավիճակը՝ որոշում է դպրոցի տեսչության պաշտոնին հրավիրել Խորեն վարդապետ Ստեփաննին, ով հայ հասարակությանը հայտնի է իր հոգևոր բարձրագույն արժեքներով [21, 1873, № 41 (25 հոկտեմբերի), էջ 2]: Այդ լուրը մեծ ցնծությամբ ընդունվեց հայ հասարակության կողմից. «Սեպտեմբերի 1-ին Խորեն վարդապետը մտաւ դպրոցը և ամենից առաջ ուշադրութիւնը դարձրուց ուսուցիչների դաստիարակութեան և նոցա ընթացքի վերա, տալով ամեն մէկին նոցանից պրօգրամայ, սկսեալ պատրաստական դասատանից մինչն չորրորդը: Պահանջեց աշակերտներից գոյգ ընդ ուսման, պահպանել բարոյականութիւն, վարուել միմեանց հետ սիրով իբրև եղբարք: Սկսեց աշխատել մեռած գրատունն վերանորոգել, որոյ մասին և ես շատ աշխատած եմ, կիսակենդան տպարանն վերանորոգել որ «Հայկական աշխարհն» շարունակէ: Սկսեց մեռաց Օրիորդաց դպրոցը կենդանացնել, պահանջելով իւրաքանչիւր աշակերտներից տարեկան վեց ռուբլի յօգուտ դպրոցի և գրատան վերանորոգութիւն և մոցրեց աշակերտներին միակերպ հագուստներ» [21, 1873, № 41 (25 հոկտեմբերի), էջ 2]:

«Մշակ» թերթն անդրադառնում է նաև Արցախի Հոգևոր դպրոցի ներքին կանոնակարգին, ուսումնական գործընթացին, ուսումնական պլանով դասավանդվող առարկաներին, ներքին կարգավիճակին [42, 1881, № 121(3 հուլիսի), էջ 2], աշակերտների առաջադիմությանն ու որոշ բացթաղումներին [22, 1874, № 4 (31 հունվարի), էջ 2], կալվածական խնդիրներին [41, 1881, № 63 (7 ապրիլի), էջ 1; 44, 1882, №13 (27 հունվարի), էջ 1]: Թերթի այս համարում կրկին բարձր է գնահատվում Հայր Խորեն վարդապետի գործունեությունը: Դպրոցի ուսուցիչներից մեկը գրում է. «Ես դպրոցի երգեցողության ուսուցիչն եմ արդէն վեց տարի, և երեք կամ չորս տեսուչներ եմ տեսել մինչև Հայր Խորեն վարդապետի գալը. միայն ոչ ոք չէ կարողացել Ղարաքաղու դպրոցի մէջ այսքան

կարգ և կանօն մտցնել երկար ժամանակներ, ինչ որ սա երեք ամսի մէջ .... Մինչև այժմ շաբաթը երգեցողության մի դաս էր միայն, և միայն երգեցիկ աշակերտներ կգնային եկեղեցի կիրակե օրեր, իսկ այժմ շաբաթը երգեցողութեան չորս դաս կայ, և շաբաթ երեկոներին և կիրակե օրեր երեք հարիւր աշակերտներ, տեսուչը և բոլոր ուսուցիչները և վերակազմակերպիչները միասին կարգով եկեղեցի են գնում աղօթելու: Եւ վերադառնալով դպրոցի մեծ դահլիճը, տեսուչը խրատական բաներ է խոսում բոլոր աշակերտների առաջ» [22, 1874, № 4 (31 հունվարի), էջ 2]:

Հոգիվածագիրն անդրադառնալով դասավանդվող առարկաներին՝ նշում է. «Աշակերտների առողջութիւնը պահպանելու և կազդուրելու համար մարմնամարզութեան դասեր նշանակեց շաբաթը երկու անգամ և առանձին ուսուցիչ հրահարեց: Մեր դպրոցի մէջ ռուսերէն լեզուն շատ թույլ էր. Հայրիկը (Խորեն վարդապետը) առանձին ուշք դարձրեց ռուսերէնին և հոգում է, որ աշակերտներն որքան կարելի է լաւ սովորեն ռուսերէն լեզուն: Շաբաթը 6 դաս նշանակեց ամեն դասատուին, իսկ պատրաստականների մէջ 9 դաս: Առանձին վերակազմակարգեց ռուսերէն խօսելու և որոշեց, որ շաբաթը 3 օր անշուշտ ռուսերէն խօսեն աշակերտներն և երեք օր մաքուր հայերէն: Տեսուչը կարգադրեց է, որ ուսուցիչները իր մօտ հաւաքվին մանկավարժական ժողովների» [22, 1874, № 4 (31 հունվարի), էջ 2]: Մեծ ոգևորությամբ նա ուսումնական պլանների մասին նա հավելում է. «Մինչև այժմ պրոգրամ (խոսքը ուսումնական ծրագրերի մասին է) ևս չէր տեսած մեր դպրոցը. իսկ այժմ ամեն ուսուցիչ իր առարկայից ամեն մի դասատուին համար առանձին պրոգրամ է ստացել» [22, 1874, № 4 (31 հունվարի), էջ 2]:

Թերթը հետաքրքիր դիտարկում է կատարել դպրոցի ներքին կարգ ու կանոնի վերաբերյալ. «Աշակերտներն եթէ պակասում են դասերից, վճարում են դրամական տուգանք. ամբողջ օրը բացակայ լինելու համար 5 կոպէկ: Ուսուցիչներն ևս իրենանց յօժար կանքով, իրաքանչիւր բաց թողած դասի համար վճարում են 50 կ. յօգուտ սահմանուած աշակերտական գանձանակի, որ կառավարում են գանձապետ ընտրուած աշակերտները և որից շահվում են ջրաւոր աշակերտները, ստանալով գրքեր, հագուստ և այլն: Այս 5 կոպէկները այնպիսի ներգործութիւն ունեցան, որ այժմ գրեթէ այլևս չեն պակասում ոչ մի օր աշակերտները, որոնք առաջ շաբաթներով դպրոցի մէջ չէին երևում» [22, 1874, № 4 (31 հունվարի), էջ 2]:

Ըստ մեզ, նման խիստ, օրինաչափ մեթոդների կիրառությունը՝ առաջին հերթին կարող է զարգացնել երեխայի պատասխանատվության զգացումը՝ ուղղված իր անձի և իր շրջապատի նկատմամբ:

Հայր Խորեն վարդապետ Ստեփանեի գործունեությունը՝ Արցախի Հոգևոր դպրոցում

բարձր են գնահատել հոգաբարձուներ Հ. Մարուխանբէկեանը, Ս. Իւզրաշեանը, Թ. Խանդամիրեանը (9 դեկտեմբերի, 1874 թ.). «Հայր Խորեն Ստեփանեի մի ամենայ վերատեսչութեան ժամանակը մեր հոգևոր դպրոցը նկատելի առաջադիմութիւն ցոյց տվեց: Այդ փաստի ճշմարտութիւնն ակնհայտ էր և բոլոր ժողովրդին դպրոցի աշակերտների հարցաքննութեան ժամանակն, որ շարունակվում էր ամենայն որ հրապարական կերպիւ սոյն ամի յունիսի 10- 30 -ը .... » [24, 1874, № 52 (26 դեկտեմբերի), էջ 3]: Այնուհետև նկարագրվում է հոգևոր դպրոցի կարգավիճակը՝ Խորեն վարդապետի՝ դպրոցից հեռանալուց հետո [24, 1874, № 52 (26 դեկտեմբերի), էջ 3]:

Արցախի կրթության ոլորտում առաջացած խնդիրների շարքում 1874 թվականին շարունակում է օրակարգի հարց մնալ աղջիկների կրթության հարցը: Այս մասին Անտոն Մելիք - Դադայանը նշում է. «...Պարոն Մառզին խորհուրդ է տալիս Շուշվայ մէջ օրիորդաց ուսումնարան հիմնել, մոռանալով որ մի ժամանակ ունեցել ենք Մարիամեան օրիորդաց դպրոց<sup>1</sup>, որը պրն. Շանշեանի օրով ծաղկած էր, ուր գնաց, այժմ նրա հոտն անգամ չկայ: Երեւակայենք որ պրն. Կանջեցեանի փողով կունենանք մի և նոյնը երկրորդ անգամ, ինչ հետևանք կունենայ մի և նոյնը ինչ որ առաջինն ունեցաւ. փոքրիկ ժամանակից յետոյ նրա դռները փակված կտեսնենք և սեփականութիւնը ով գիտէ որ աղայի գրպանը կղնուի, այժմ կասեն ուսումնարանը այն ժամանակ արծաթ չունէր, իսկ սա ունենալու էր բաւականին ասպառով գումար, բայց ինչ օգուտ էր փողը ինքը ըստ ինքեան ոչինչ չէ կարողանում շինել, նրան հարկաւոր են հմուտ գործ դնողներ, մեզ մանաւանդ շուշեցիներին հարկաւոր են գիտուն ու գործող մարդիկ, առանց որոնց մենք երբէք չենք հասնի մեր նպատակին....» [23, 1874, № 25 (27 հունիսի), էջ 3]:

Հայ օրիորդների լուսավորության<sup>2</sup> ու կրթությանը վերաբերվող մի քանի խնդիրներ քննարկվել են «Մշակ» թերթի 1877 թ. համարներից մեկում. «Մեր Շուշի քաղաքը կանանց լուսատրութեան և կրթութեան մէջ մինչև 1876 տարի Կովկասի միւս հայաբնակ քաղաքներին նայելով՝ շատ դանդաղ էր գնում և թէպէտ մինչև այն ժամանակ բաւական զգալի կարօտութիւն էր

<sup>1</sup> Շուշիի Օրիորդաց դպրոցը բացվել էր 1864 թ. ապրիլի 7-ին: Վերջինս բացվեց մեծահարուստ Համբարձում Հախումյանի սեփական տանը՝ տիկին Մարիամ Հախումյանի միջոցներով և տնօրինությամբ: Տիկին Հախումյանին խրախուսել և մեծապես օգնել էին այն ժամանակ Թեմական դպրոցի տեսուչ Պետրոս Շանշյանը և ուսուցիչ Պերմ Պռոշյանը: Սակայն դպրոցը երկար չի գործել և փակվել էր 1872 թ.: Տե՛ս [14; 49, 1885, № 63(15 օգոստոսի), էջ 1]:

<sup>2</sup> Հայ օրիորդների մեջ հայրենասիրական գաղափարներ սերմանելու համար, երբեմն նրանց ընդգրկել էին հայկական թատերական ներկայացումներ մեջ: Տե՛ս [ 37, 1880, № 49 (25 մարտի), էջ 3]:

տեսնվում այս մասին, բայց և այնպես՝ ոչ որ ձեռնամուխ չէր լինում կանանց համար մէկ ազգային ընդհանուր ուսումնարան բանալ, որ կարող լինէր միայն փրկել նրանց տգիտությունից և յառաջ տանել դէպի լուսատրություն՝ կրթության և դաստիարակության միջոցով: Մինչև վերոյիշեալ ժամանակը ամենայն մարդ բաւականանում էր իր աղջկերանց համար մի աննշան ընտանեկան կրթութեամբ, որ ստանում էին կա՛մ իրանց ծնողներից և կա՛մ մասնաւոր վարժապետներից: Այդ հանգամանքների պատճառով՝ ժողովրդեան ստորին դասը միշտ գրկվում էր կանանց դաստիարակությունից ...» [25, 1877, № 65 (8 սեպտեմբերի), էջ 2] Թերթը շարունակելով՝ 1876 թ. նշում է, որ տեղի բարեգործական [32, 1878, № 195 (11 նոյեմբերի), էջ 2; 33, 1879, № 100 (23 հունիսի), էջ 2; 35, 1880, № 41 (13 մարտի), էջ 3; 36, 1880, № 42 (14 մարտի), էջ 1] ընկերության ջանքերի շնորհիվ կրկին բացվեց օրիորդաց դպրոց. «...Եւ այժմ մեր Ծուշի քաղաքը, փոխանակ մէկի՝ կանանց լուսատրութեան համար ունի երկու ուսումնարան, որոնցից առաջինը՝ ինչպէս յիշեցի վերևում, հիմնված է տեղիս բարեգործական ընկերության կանոնադրութեան համեմատ, որտեղ ընդունվում են անխտիր՝ առանց որոշելու ծագումն և կրօնը՝ մատաղահաս աղջիկներ սկզբնական կրթութիւն ստանալու համար՝ գլխատրասպէս ռուսերէն լեզուով, քաղաքական ուսումնարանների պրօգրամային համաձայն, իսկ երկրորդը՝ հմնված է նոյն թուում ապրիլ ամսի վերջերում հայոց Վեհափառ Կաթողիկոսի հրամանով՝ յատկապէս միայն հայազգի աղջկերանց սկզբնական կրթութիւն տալու համար, առաւելապէս մայրենի լեզուով, որտեղ սովորեցնում են և ձեռագործութիւնը: Յիշեալ երկու ուսումնարանները կան և մինչև այժմ տևում են և այդ մեծ երևույթ է մեր քաղաքի մէջ ...» [25, 1877, № 65 (8 սեպտեմբերի), էջ 2]:

Ընդգծենք, որ հողվածագրի նշված ուսումնարաններից մեկը վերաբերվում է Ծուշիի Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցին: Հարկ է նշել, որ Ծուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցի փակվելուց հետո, այնտեղի աղջիկներից ոմանք սովորել են տղաների հետ միասին: Այս հանգամանքը խիստ զայրացրել էր հասարակության որոշ խավերին: Եվ ի վերջո, 1876 թ. վարդապետ Արիստակես Սեդրակյանի [39, 1880, № 118 (10 հուլիսի), էջ 1] ջանքերով Ծուշիում բացվում է աղջիկների առանձին դպրոց՝ Հռիփսիմյան անունով<sup>3</sup>:

Թերթը գրում է նաև՝ նախնական փուլում օրիորդաց դպրոցում աշակերտների կրթաթոշակների հետ կապված խնդրի վերաբերյալ.

«Մարտի 1-ին օրիորդաց դպրոցը ունէր միայն 14 ձրիաթոշակ աշակերտուհի: Յունիսի 10-ին, մինչև Թիֆլիս գալս ուսուցիչներ և վարժուհի ընտրելու համար, 44 աշակերտուհի, իսկ այժմ 65-ից ավելի և համարեա բոլորը թոշկաւոր ...» [26, 1877, № 76 (17 հոկտեմբերի), էջ 3]:

Ծուշիի երկու օրիորդաց դպրոցների գործունեությանն է անդրադառնում Եղիսաբեթ Ալիսանեանցը իր «Նամակ Ծուշուց» հոդվածում. «... Այստեղ ունենք երկու օրիորդաց դպրոց, մէկը՝ Խորէն, իսկ միւսը Միւրիմեան վարդապետի հիմնած: Խորէնի հիմնածը արդէն կառավարութեան իշխանութեան ներքոյ է և բոլոր առարկաները աւանդվում են ռուսաց լեզուով, առանց դարձնելու այն կարևոր ուշադրութիւնը մայրենի լեզուի վերա, որ մանկավարժական գիտութեան մէջ համարվում է լուսատրութեան և ճշմարիտ առաջադիմութեան հիմքը: Իսկ Մուրիմեան վարդապետի հիմնածը որի մէջ չորս ամիս սորանից առաջ 20-25 չքաւոր ծնողաց երեխաններ էին և գտնվում էր Սեմինարի բակում, երկու փոքրիկ սենեակի մէջ, այժմ անխոնջ աշխատութեամբ ուսումնարանի հոգաբարձուների և տեսչի ստացել է այն ընդարձակութիւնը, որ շատ անսովոր երևույթ է մեր արդէան հայկական կեանքի մէջ և որ գեղեցիկ օրինակ կարող էր լինել մեր շատ յետադեմ և օտարասէր եղբայրակիցներին և քոյրերին: Մեր օրիորդաց դպրոցը, այժմ գտնվում է իշխան Կարապետի հոյակապ տանը երկու դասատան բաժանված՝ առաջինի և պատրաստակալի: Առաջինում դասաւանդվում է՝ կրօն, հայոց լեզու, հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, հայոց և ընդհանուր, ռուսաց և ֆրանսիական լեզու, թաւաբանութիւն, ձեռագործ, զժագրութիւն վայելչագրութիւն, պար և երգեցողութիւն: Իսկ պատրաստակալում, որ յիսունից ավելի աշակերտուհիք ունի, դասաւանդվում է՝ կրօն, հայոց լեզու, թաւաբանութիւն և այլն՝ մանուկների զարգացմանը նպաստող առարկաներ» [27, 1877, № 78 (24 հոկտեմբերի), էջ 2]:

Ուշագրավ է Արիստակես վարդապետ Սեդրակյանի հողվածը՝ «Նամակ խմբագրին» խորագրով: Հողվածում նա անդրադառնում է Արցախի կրթական ոլորտներում առաջացած որոշ խնդիրներին. «Այնքան ժամանակի ընթացքում, որ ես մենակ կառավարեցի, այդ դպրոցը ծախս է ունեցել վարժուհու, ծառայի, փայտի, մանր շինութեան, ասեղնագործութեան նիւթերի և այլն, ընդամենն 316 ռուբլի, որից 150 ռուբլին Կոնստանտնուպոլիսից փոխարինարար ստացած գումար է. 87 ռուբլ 61 կօպ, Կոնստանտնուպոլիսի միջոցով ժողոված նուէրներ իսկ մնացածը այդ տեղերից...» [27, 1877, № 78 (24 հոկտեմբերի), էջ 2]: Այնուհետև, նա հավելում է, որ իր տեսչության ժամանակ<sup>4</sup>

<sup>3</sup> Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցը փակվել է 1885 թ., այնուհետև՝ վերաբացվել՝ 1886 թ.-ի հոկտեմբերին՝ որպես երկդասյա իգական դպրոց: Տեսուչն եղել է Մովսէս Սամվելյանը: 1896թ.-ին փակվել է, 1906 թ.-ին կրկին վերաբացվել: Տե՛ս [9, էջեր 377-378]:

<sup>4</sup> Արիստակես վարդապետ Սեդրակյանի Ծուշիից հեռանալու մասին հետքերի տեղեկություններ կան «Մշակ» թերթի տարբեր համարներում: Տե՛ս [29, 1878, № 87 (31 մայիսի), էջ 2; 38, 1880, № 94 (6 հունիսի)]: Արիստակես վարդապետ

Օրիորդաց դպրոցը բավականին առաջադիմել էր [27, 1877, № 78 (24 հոկտեմբերի), էջ 2]:

«Մշակ» թերթը 1878 թ.-ի իր համարներից մեկում անդրադառնում է Արցախի Ավետարանոցի և հարակից գյուղերի կրթական ոլորտի խնդիրներին: Ըստ թերթի՝ հայկական որոշ գյուղերում բացակայում են համապատասխան կրթության օջախները. «Արցախ նահանգի Վարանդա գաւառի մի անկյունում գտնվում է Աւետարան անունով գիւղը 17 վերստ հեռավորութեամբ Շուշի քաղաքից: Օղբ գեղեցիկ է, ջուրը հիանալի ու առողջարար է, բնակիչների թիւը մօտաւորապէս կը հասնի երեք հարիւրի .... Աւետարան գիւղի մօտ կան և ուրիշ 16 գիւղեր՝ 40-ից մինչև 60 բնակիչներով ամեն գիւղում և կամ աւել, մինչև 60 բնակիչներով ամեն գիւղում և կամ աւել, մինչև 30 վերստ հեռավորութեամբ: Այս բոլոր գիւղերում ցաւելով պէտք է ասենք, որ ոչ մէկում չը կայ ուսումնարան: Մրս պատնասոր, մեր կարծիքով, ոչ թէ ժողովրդեան սառնասրտութիւնն է, այլ հոգևոր իշխանութեան անհոգութիւնը: Յիշեալ գիւղերի մարդաբնակչութիւնը միջին թուով անցնում է 1000 տնից աւելի և դրանք բոլորովին գուրկ են ուսումից: Միայն պատահում է տեսնել երեխաներին տէրտէրների ու տիրացուների մօտ Սաղմոս կամ Աւետարան դաս առնելիս» [31, 1878, № 117 (13 հուլիսի), էջ 1]:

Թերթն ընդհանուր ներկայացնում է նաև Արցախի դպրոցների նյութական խնդիրների վերաբերյալ որոշ տեղեկություններ. «Յայտնի է որ Շուշու հայոց հոգևոր դպրոցը ունէր մեծ հողային կալուածներ, մօտաւորապէս 200 հազար դեսեստին չափով: Այդ հողերի կէտը անցաւ մասնատու անձերի ձեռքը և կատարելապէս կորսաւ դպրոցի համար: Այժմ դպրոցը ունի պահած այդ կալուածների կէտը, մօտ 100 հազար դեսեստին հող: Բայց հոգարարձուները ոչինչ արդիւնք չեն ցոյց տալիս այդ սհագին հողերից: Ի՞նչպէս է լինում, այդ չը գիտեմ: Միայն գիտեմ, որ դպրոցը կառավարվում է շատ անհաստատ արդիւնքներով՝ ծխադրամով, պասկադրամով, մոմալիանառոյթեան և այլ եկամուտներով. Շուշու երկու դպրոցները՝ արականը և իգականը, այսպիսով կառավարվում են ընդամենը 8000 ռուբլ արդիւնքով, այն էլ շատ անհաստատ արդիւնքով: Այն ինչ այդ երկու դպրոցները կառավարելու համար հարկատու է առ նուազն 11.000 ռուբլ տարեկան եկամուտ» [43, 1881, № 134 (23 հուլիսի), էջ 2]:

Արցախի կրթական ոլորտի կարևոր խնդիրներից է Շուշիի Ռեալական ուսումնարանի<sup>5</sup> բացման հարցը [47, 1883, № 26 (15 փետրվարի),

էջ 1], որը սկսվել էր ակտիվորեն քնարկվել դեռևս 1880 թվականից. «...Երկար խօսեցին այստեղ մի ռեալական ուսումնարան ունենալու համար, սասցին, խորհեցին, գրեցին, բայց այս տարի էլ ոչինչ չունեցանք» [40, 1880, № 202 (14 նոյեմբերի), էջ 2]:

«Մշակ» թերթի 1882 թվականի համարներից մեկում հիշատակվում է Հաղրութ գյուղի հոգևոր ուսումնարանի առաջադիմության, ինչպես նաև կրթական ոլորտի որոշ խնդիրների մասին. «Երեք տարի է որ Հատրուտ գիւղի հոգևոր ուսումնարանը գոյութիւն ունի: Ուսումնարանը բաւական առաջադիմութիւններ արաւ այդ երեք տարվայ ընթացքում: Հոգարարձուներ Մ. քահանայ Տէր-Սրաբիոնեանց և պ. Մէլքունեանց ամեն ջանք են թափում ուսումնարանը բարելաւելու, բայց նիւթական միջոցներ դժբաղդապէս պակաս են դպրոցին: Դարձուները կամատուր նուիրատուութիւններ հաւաքելով հագիւ կարողացան երեք տարվայ ընթացքում լրացնել ուսուցչի բռնիկը և դպրոցի միւս ծախսերը: Բայց վերջապէս, չը կարողանալով այլ ևս կառավարել դպրոցը, հոգարարձուները հրաժարական են տուել իրանց պաշտօնից» [45, 1882, № 88 (21 մայիսի), էջ 1]: Թերթն անդրադառնում է նաև Հաղրութի Հոգևոր ուսումնարանի հետ առնչվող որոշ այլ խնդիրներին [45, 1882, № 88 (21 մայիսի), էջ 1]: Կան շատ քիչ տեղեկություններ նաև Արցախի այլ շրջանների կրթական կյանքի վերաբերյալ:

Այսպիսով ընդհանրացնելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ հստակ կարող ենք վկայել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Արցախի տարբեր շրջաններում գործել են հայկական մի շարք նշանավոր դպրոցներ: Չնայած հայկական կրթական համակարգում առաջացած տարբեր խնդիրներին, բազմաթիվ արգելքներին (ի նկատի ունենք մի քանի անգամ հայկական դպրոցների փակման խնդիրներին), այնուամենայնիվ հայկական կրթական կյանքն Արցախում, ինչպես նաև Արևելյան Հայաստանի այլ գավառներում չի դադարել իր առաջիադացումը:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Ավագյան Ս.**, Ղարաբաղի մամուլի պատմություն: - Երևան, 1989:
2. **Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.**, Արցախի կրթական համակարգը: - Ստեփանակերտ, 2014:
3. **Բարխուդարեանց Մ.**, Արցախ: - Երևան, 1996:
4. **Բալայան Վ.**, Արցախի պատմություն: - Երևան, 2002:
5. **Գրիգորյան Հ., Հարությունյան Գ.**, Շուշիի Ռեալականը: - Երևան, 2001:
6. **Երկանյան Վ.**, Հայկական մշակույթը 1800-1917 թթ.: - Երևան, 1982:
7. **Լեո**, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում: - Թիֆլիս, 1911:

Մեղրակյանի և Վ. Բարաջանեանցի հարաբերությունների մասին ևս կան տեղեկություններ թերթի այլ համարներում: Տե՛ս [30, 1878, № 103 (23 հունիսի), էջ 2; 31, 1878, № 117 (13 հուլիսի)]:

<sup>5</sup> Շուշիի Ռեալական ուսումնարանը հիմնվել է 1881-ին շուշեցի մեծահարուստ Մովսես բեկի տանը: Այն գործել է մինչև 1920 թվականը: Տե՛ս [5]:

8. **Լեո**, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913 թթ.): - Թիֆլիս, 1914:
9. **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ.: - Երևան, 1987:
10. Յիշատակարան Ղարաբաղի (Արցախի) Հայոց Թեմական Հոգևոր դպրանոցի: - Շուշի, 1901:
11. **Հարությունյան Մ.**, Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: - Ստեփանակերտ, 2010:
12. **Հարությունյան Մ.**, Պետրոս Շանշյանի մանկավարժական հայացքները: // «Դպրատուն», Գիտական հոդվածների ժողովածու, 2016, N 1 (4), էջ 88-94:
13. Ղարաբաղի Հայոց Հոգևոր Թեմական դպրանոցի 75-ամեակը: - Շուշի, 1913:
14. Ղարաբաղու Տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվելը: - Շուշի, 1864:
15. «Արձագանք», գրականական և քաղաքական շաբաթաթերթ: - Թիֆլիս, 1882-1898 թթ.:
16. «Մշակ», հասարակական-քաղաքական, գրական թերթ: - Թիֆլիս, 1872-1921 թթ.:
17. «Մեղու Հայաստանի», քաղաքական, բանասիրական և առևտրային շաբաթաթերթ (1873 թ.-ից օրաթերթ): - Թիֆլիս, 1858-1886 թթ.:

*Содана/Հանձնվել է՝ 20.09.2024*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 24.09.2024*

*Принята/Ընդունվել է՝ 30.09.2024*